ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի2012թ. N ...Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԵՎ ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԼՂՀ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 2012-2014ԹԹ. ՀԱՄԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հաստատել 2012 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված «Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև բարեկամության մասին» համաձայնագիրը և ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև 2012-2014թթ. համար համագործակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԵՎ ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԼՂՀ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 2012-2014ԹԹ. ՀԱՄԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համագործակցության ծրագիրը և համաձայնագիրը կնքվել են՝ ելնելով Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև ձևավորված տնտեսական հարաբերությունների և բարեկամական կապերի խորացման անհրաժեշտությունից: Նախատեսվում է իրականացնել համագործակցություն տարբեր ոլորտներում, փորձի փոխանակում երկու քաղաքապետարանների աշխատակազմերի միջև, ինչպես նաև տեխնիկական աջակցություն ցուցաբերել Ստեփանակերտի քաղաքապետարանին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝ պահանջվում է վերոնշյալ համաձայնագրի և համագործակցության ծրագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԵՎ ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԼՂՀ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 2012-2014ԹԹ. ՀԱՄԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև բարեկամության մասին» համաձայնագրի և «ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև 2012-2014թթ. համար համագործակցության ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԵՎ ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԼՂՀ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 2012-2014ԹԹ. ՀԱՄԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև բարեկամության մասին» համաձայնագրի և «ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև 2012-2014թթ. համար համագործակցության ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2012 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան համայնքը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքապետարանը, այսուհետ՝ Կողմեր,

Ելնելով Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև ձևավորված տնտեսական հարաբերությունների և ինտեգրացման խորացման անհրաժեշտությունից,

Նպատակ ունենալով ամրապնդել և զարգացնել բարեկամական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի միջև,

Ելնելով բարեկամության, հավասարության և փոխշահավետության սկզբունքներից

համաձայնեցին հետևյալի շուրջ.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը, սույն Համաձայնագրին և իրենց երկրների օրենսդրությանը համապատասխան, պայմանավորվում են իրականացնել համագործակցության ծրագրեր հետևյալ ուղղություններով.

- Ճարտարապետության, քաղաքաշինության և հողօգտագործման,
- առևտրի և սպասարկումների,
- կրթության,
- ֆինանսական,

- համայնքային գույքի կառավարման,
- քաղաքային տրանսպորտի կառավարման,
- մշակույթի, տուրիզմի, սպորտի և երիտասարդության հարցերի,
- առողջապահության և սոցիալական ապահովության,
- շրջակա միջավայրի պահպանության և կանաչապատման ոլորտներում,
- բնակարանային կառավարման,
- կոմունալ տնտեսությունների,
- ենթակառուցվածքների զարգացման բնագավառներում:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը նպաստում են երկու քաղաքների տնտեսության ոլորտում գործող կազմակերպությունների, գործարարների, ինչպես նաև անհատների միջև կապերի ամրապնդմանը, տնտեսական կապերի ակտիվացմանը ու համատեղ ձեռնարկությունների ստեղծմանն ուղղված նախաձեռնություններին:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը կհամագործակցեն տարբեր ծրագրերի շրջանակներում՝ իրականացնելով երկկողմ և բազմակողմ նախագծեր:

ՀՈԴՎԱԾ 4

Ծրագրի իրականացման ընթացքի քննարկման համար Կողմերը կստեղծեն համատեղ աշխատանքային խմբեր, որոնք կիսամյակը մեկ անգամ կքննարկեն և քաղաքապետներին կներկայացնեն տեղեկատվություն Ծրագրի կատարման ընթացքի մասին:
Աշխատանքային խմբերի նիստերը հաջորդաբար կգումարվեն Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

ՀՈԴՎԱԾ 5

Վերոհիշյալ սկզբունքների հիման վրա Կողմերը ըստ բնագավառների կմշակեն գործնական ծրագրեր, որոնք կհամարվեն սույն Համաձայնագրի բաղկացուցիչ մասը:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն պահից, երբ Կողմերը ստանում են Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին գործընթացների կատարման մասին վերջին գրավոր տեղեկացումը և կգործի այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը վեց ամիս առաջ գրավոր չի տեղեկացրել մյուս Կողմին Համաձայնագրի կատարումը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Ստեփանակերտ ք. 2012 թ. սեպտեմբերի 28-ին, երկու բնօրինակով՝ հայերեն լեզվով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ	ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ	ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
_____	_____

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԼՂՀ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 2012-2014ԹԹ. ՀԱՄԱՐ

Միջոցառումների բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարողներ	
		Երևանի կողմից	Ստեփանակերտի կողմից
Ճարտարապետություն, քաղաքաշինություն, անշարժ գույքի կառավարում, հողօգտագործում			
1. Ճարտարապետության, քաղաքաշինության և հողի վերահսկողության ոլորտում փոխգործակցության իրականացման նպատակով Կողմերը կնախատեսեն՝ • Աջակցություն Ստեփանակերտի նոր գլխավոր հատակագծի կազմման հարցում; • Տեղեկատվության փոխանակում նոր շինարարական տեխնոլոգիաների և համատեղ գործունեության նորմատիվ–իրավական և մեթոդական ապահովման ներդրման մեջ; • Աջակցության ցուցաբերում մասնագետների փորձառնության և վերապատրաստման անցկացման հարցում; • Օրենսդրական բազայի ուսումնասիրություն և համատեղ քննարկումների կազմակերպում; • Փորձի փոխանակում և աջակցության ցուցաբերում ապօրինի ինքնակամ կառույցների և հողազավթման դեմ պայքարի հարցում; Աջակցություն հուշակոթողների, հուշաքարերի, խաչքարերի, հուշատախտակների բացման և փողոցների , հրապարակների պողոտաների և այլ անվանակոչումների հարցում:		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչություն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն	Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժին, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի հողաշինարարական բաժին, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի կառավարման բաժին, Ստեփանակերտի քաղաքային տեսչություն

2. Անշարժ գույքի կառավարման ոլորտում փոխգործակցության իրականացման նպատակով Կողմերը կնախատեսեն՝ • Փորձի փոխանակում; • Օրենսդրական բազայի ուսումնասիրություն և համատեղ քննարկումների կազմակերպում; Աջակցություն Ստեփանակերտ քաղաքի անշարժ գույքի կառավարման ծրագրի նախագծի մշակման աշխատանքներին:			
Առևտուր և սպասարկումներ			
3. Առևտրի և սպասարկումների ոլորտում փոխգործակցության իրականացման նպատակով Կողմերը կնախատեսեն՝ • Փորձի փոխանակում երկու քաղաքների առևտրի և սպասարկման ոլորտում իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարելագործման վերաբերյալ; • Աջակցության ցուցաբերում մասնագետների վերապատրաստման գործում • Բացօթյա առևտրի կանոնակարգման, բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման, նոր շուկաների կառուցման միջոցով համապատասխան վաճառատեղերի ստեղծման, առևտրի և սպասարկման ոլորտում օրենքով սահմանված հսկողության իրականացման վերաբերյալ, ինչպես նաև ոլորտին վերաբերող օրենսդրական բազայի ուսումնասիրության և համատեղ քննարկումների կազմակերպում:		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչություն	Ստեփանակերտի քաղաքային տեսչություն

Քաղաքային տնտեսություն և տրանսպորտ			
4. Կողմերի մասնագետներին ծանոթացնել՝ • Երկու քաղաքների հասարակական տրանսպորտի աշխատանքի և ճանապարհային երթևեկության կազմակերպման վիճակի հետ:		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչություն	Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժին
5. Կազմակերպել փորձի փոխանակում և Ստեփանակերտի քաղաքապետարանի մասնագետների ուսուցում հետևյալ ոլորտներում. • Սանմաքրման կազմակերպում • Բազմաբնակարանային շենքերի կառավարում և համատիրությունների հետ տարվող աշխատանքի կանոնակարգում և բարելավում • Աղբավայրերի կառուցում և շահագործում • Աջակցություն նոր տեխնիկայի ձեռքբերման հարցում		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչություն	Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժին, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի բնակարանային, կոմունալ տնտեսության և բնապահպանության բաժին
Բնապահպանություն			
6. Բնապահպանության ոլորտում փոխգործակցություն իրականացնելու նպատակով Կողմերը կնախատեսեն՝ • Փորձի փոխանակում կոշտ թափոնների ուտիլացման և վերամշակման արդյունավետ համակարգի ներդրման հարցում. • Փորձի փոխանակում և համագործակցություն տնկարանների ստեղծման, ծառատեսակների ուսումնասիրման և փոխանակման, ծառատունկների կազմակերպման հարցերում:		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչություն	Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի բնակարանային, կոմունալ տնտեսության և բնապահպանության բաժին

Կրթություն			
7.Կրթության ոլորտում փոխգործակցություն իրականացնելու նպատակով Կողմերը կնախատեսեն՝ • Երկու քաղաքների դպրոցների միջև բարեկամության և փոխգործակցության հաստատում; • Դպրոցական պատվիրակությունների փոխանակում Երևանի և Ստեփանակերտի դպրոցների միջև; • Ստեփանակերտի դպրոցների ուսուցիչների մասնակցությամբ դասալսումների և գործնական պարապմունքների միջոցով ծանոթացում Երևանի դպրոցների դասավանդման փորձին; • Ստեփանակերտի դպրոցների գրադարանների համալրում դասագրքերով, ուսումնամեթոդական և գեղարվեստական գրականությամբ; • Ստեփանակերտի դպրոցների ուսուցիչների համար որակավորման բարձրացման կարճատև կուրսերի կազմակերպում; • Համատեղ դպրոցական օլիմպիադաների, մրցույթների կազմակերպում • Փոխադարձ այցելություններ և միջոցառումների կազմակերպում։		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչություն	Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժին

Ֆինանսական ոլորտ			
8.Ֆինանսական ոլորտում փոխհամագործակցության իրականացման նպատակով Կողմերը նախատեսում են. 1. Օրենսդրական բազայի ուսումնասիրություն և համատեղ քննարկումների կազմակերպում 2. Փորձի փոխանակում և աջակցություն ՀՀ պետական և Երևան քաղաքի բյուջեներով հատկացված միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման ուղղությամբ վերահսկողության իրականացման հարցում 3. Փորձի փոխանակում գանձապետական համակարգի միջոցով իրականացվող Երևան քաղաքի բյուջեի դրամական միջոցների կառավարման, եկամուտների ու ծախսերի ամենօրյա հաշվառման, դրանց ճշտության ստուգման, սխալ մուտքագրված գումարների վերադարձման հետ կապված փաստաթղթերի կազմման և անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման հարցում 4. Փորձի փոխանակում և աջակցություն համայքնային ենթակայության պետական ոչ առևտրային, առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տարեկան եկամուտների ու ծախսերի, դրամական միջոցների հոսքերի ծրագրային ցուցանիշների /նախահաշիվների/, հաստիքացուցակերի քննարկման, նախահաշիվների համեմատ փաստացի կատարողականների ճշտման և ամփոփման , ինչպես նաև եռամսյակային ու տարեկան ֆինանսատնտեսական վիճակների դիտարկումների /մոնիտորինգ/ և այդ կազմակերպությունների առողջացման վերաբերյալ առաջարկությունների հարցում 5. Աջակցության ցուցաբերում մասնագետների վերապատրաստման հարցում 6. Տեղական տուրքերի, վճարների, այլ պարտադիր վճարների և նոր եկամտատեսակների վերաբերյալ փորձի փոխանակում:		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչություն	Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսաբյուջետային բաժին, Ստեփանակերտի քաղաքային տեսչություն

Առողջապահություն			
9. Առողջապահության ոլորտում փոխգործակցություն իրականացնելու նպատակով Կողմերը կնախատեսեն՝ • Տեղեկատվության փոխանակում /բնակչությանը ցուցաբերվող բուժա–կանխարգելիչ օգնության կազմակերպման կատարելագործման, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքի փորձի վերաբերյալ, բժշկական տեխնիկայի, դեղամիջոցների, բժշկական նշանակության այլ միջոցների շուկայի վիճակի, սոցիալական ծառայությունների մատուցման բարելավման և կատարելագործման, սոցիալապես խոցելի խմբերի հետ տարվող աշխատանքների մասին և այլն/։ • Քաղաքացիների առողջության պահպանման ոլորտում այլ հարցերի դիտարկում՝ ելնելով Կողմերի պահանջմունքներից և հնարավորություններից;		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչություն	Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական պաշտպանության և առողջապահության բաժին
Սոցիալական ապահովություն			
10. Սոցիալական ապահովության ոլորտում փոխգործակցություն իրականացնելու նպատակով Կողմերը կնախատեսեն՝ • Ստեփանակերտի անապահով ընտանիքների երեխաների ընդունելություն և էքսկուրսիոն ծրագրի կազմակերպում Երևանում; • Աջակցություն զոհված ազատամարտիկների և հաշմանդամ դարձածների ընտանիքներին; • Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ, անօթևան երեխաների հայտնաբերման , համապատասխան հաստատություններում տեղավորման և աջակցության հարցերի հետ կապված փորձի և տեղեկատվության փոխանակում; • Ստեփանակերտի սոցիալական սպասարկման կենտրոնների մասնագետների համար որակավորման բարձրացման երկօրյա կուրսերի կազմակերպում և տեղեկատվության փոխանակում սոցիալական		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն	Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական պաշտպանության և առողջապահության բաժին

աշխատանքի, տունայցի մեթոդների, սթրեսի կառավարման, սոցիալական սպասարկման ժամանակակից ձևերի և մեթոդների վերաբերյալ; • Կարիքավորության գնահատման չափորոշիչների, աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրերի քննարկում և և փորձի փոխանակում; • քննարկումների կազմակերպում՝ դեմոգրաֆիական ցուցանիշների բարելավման, ծնելիության խթանման թեմաներով; • Սոցիալական աշխատողների պատվիրակությունների փոխանակում Երևանի և Ստեփանակերտի սոցիալական սպասարկման կենտրոնների միջև:			
Մշակույթ և տուրիզմ			
11.Մշակույթի և տուրիզմի ոլորտներում փոխգործակցություն իրականացնելու նպատակով Կողմերը կնախատեսեն՝ • Ուղիղ կապերի հիման վրա գրադարանավարային գործի ոլորտում համագործակցության կազմակերպման հնարավորությունը /փորձի փոխանակում, գեղարվեստական գրականության ընտրությունը՝ Ստեփանակերտի գրադարաններին փոխանցելու համար/; • Փորձի փոխանակում և մասնակցություն Երևան և Ստեփանակերտ քաղաքների մշակութային հաստատությունների /թատրոններ, թանգարաններ, արհեստակցական միություններ/ կողմից անցկացվող մրցույթներում, ցուցահանդեսներում և փառատոններում; • Ստեփանակերտում Երևանի օրերի և Երևանում Ստեփանակերտի օրերի անցկացում; • Աջակցություն երկու քաղաքներում անցկացվող հոբելյանական միջոցառումների անցկացման հարցում; • Համատեղ թատերական բեմադրությունների իրականացում; • Ստեփանակերտում և Երևանում զբոսաշրջային էքսպո ցուցահանդեսներին մասնակցություն;		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն	Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության բաժին

• գրադարանավարության ոլորտում փորձի փոխանակում • զբոսաշրջության գրավչությունների մասին տեղեկատվության փոխանակում, ճանաչողական այցերի և տուրերի կազմակերպում; • զբոսաշրջային թեմաներով փոխադարձ կլոր սեղանների և քննարկումների կազմակերպում; • երաժշտական և արվեստի դպրոցների փոխայցելությունների, համերգային ծագրերի կազմակերպում; • երկու քաղաքների միջև բարեկամության փառատոնների կազմակերպում			
Սպորտ և երիտասարդական քաղաքականություն			
12. Սպորտի և երիտասարդական քաղաքականության ոլորտներում փոխգործակցություն իրականացնելու նպատակով Կողմերը կնախատեսեն՝ • Երևանի և Ստեփանակերտի տարբեր մարզաձևերի մարզիկների և հավաքականների մասնակցության հնարավորությունը 2 քաղաքներում անցկացվող բաց մրցույթներում; • Երևանի և Ստեփանակերտի ֆիզկուլտուրա–սպորտային կազմակերպությունների միջև ուղիղ կապերի հաստատում; • Տարբեր մարզաձևերով ընկերական հանդիպումներ երկու քաղաքապետարանների աշխատակազմերի միջև; • Առողջ ապրելակերպի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մասնակցությամբ արշավների, ամառային ճամբարների և էքսկուրսիոն ծրագրերի կազմակերպում ԼՂՀ–ում և Երևանում;		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին	Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության բաժին, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժին

Համագործակցություն Երևանի և Ստեփանակերտի քաղաքապետարանների աշխատակազմերի միջև			
13.Երկու քաղաքապետարանների աշխատակազմերի միջև արդյունավետ փոխգործակցություն իրականացնելու նպատակով Կողմերը կնախատեսեն՝ • Երկու քաղաքապետարանների աշխատակազմերի քարտուղարությունների միջև բարեկամության հաստատում, փոխայցելությունների իրականացում; • Ստեփանակերտի քաղաքապետարանի երիտասարդ մասնագետների պրակտիկայի անցկացում Երևանի քաղաքապետարանում; • Օրենսդրական բազայի ուսումնասիրություն և համատեղ քննարկումների կազմակերպում; • Աջակցություն Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքի կատարելագործման հարցում; • «Էլփաս» փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգին տիրապետելու նպատակով Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի մասնագետների վերապատրաստում; • Աջակցություն Ստեփանակերտի քաղաքապետարանին գույքահարկի և այլ եկամուտների հաշվարկման, անշարժ գույքի հաշվառման և այլ անհրաժեշտ ծրագրային ապահովման հարցում։ • Աջակցություն Ստեփանակերտի քաղաքապետարանին միջազգային կառույցների հետ համագործակցության հարցում; • Քաղաքային ԶԼՄ–ներում Երևանի և Ստեփանակերտի քաղաքապետարանների միջև համագործակցության ընթացքի վերաբերյալ կանոնավոր լուսաբանում։ • Վերահսկողության ոլորտում փորձի փոխանակում։		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարություն, Երևանի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն ՓԲԸ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչություն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչություն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն, Երևանի քաղաքապետարանի վերահսկողության վարչություն	Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարություն, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների բաժին, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի համակարգչային և տեղեկատվական ծառայությունների բաժին , Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության բաժին

Ծրագրի իրականացման և կազմակերպչական հարցերի ավելի օպերատիվ որոշման համար Կողմերը իրենց իրավունք են վերապահում սահմանված կարգով ներգրավել ցանկացած պետական, առևտրային, հասարակական և այլ կազմակերպություններ։

Ստորագրված է Ստեփանակերտ քաղաքում «28» սեպտեմբերի 2012թ.

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ	ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
_____Ս.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ	_____Տ.Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ